Դասընթացը ներառված է «Մասնագիտական դասընթացների կրթաբլոկում»՝ 4 ակադեմիական կրեդիտ (144 ակադեմիական ժամ) աշխատատարությամբ, որից 16 ակադեմիական ժամ նախատեսվում է գործնական պարապմունքների համար: Դասընթացը նախատեսվում է ուսումնասիրել 2026-2027 ուսումնական տարվա 1-ին կուրսի 1-ին կիսամյակում:

Ուսումնական աշխատանքի տեսակները	**Ընդամենը, ակադ. ժամեր**
1. Առարկայի ուսումնասիրման ընդհանուր աշխատատարությունն, այդ թվում՝	**144**
1.1. Լսարանային պարապմունքներ, այդ թվում՝	36
1.1.1. Դասախոսություններ	20
1.1.2. Գործնական պարապմունքներ	16
1.2. Ինքնուրույն աշխատանք, այդ թվում՝	108
1.2.1. Գրավոր ինքնուրույն աշխատանքներ	54
1.2.2. Էսսե և ռեֆերատներ	54
Ամփոփիչ ստուգում (քննություն, ստուգարք)	**Ստուգարք**

Դասընթացի ծավալի բաշխում (ակադեմիական ժամերով) ըստ թեմաների և ուսումնական աշխատանքի տեսակների

Առարկայի բաժինները և թեմաները	**Ընդամենը**	**Դասախոսու-թյուններ**	**Գործնական / սեմինար պարապմունքներ**
1	2=3+4	3	4
Թեմա 1. Էրգոթերապիայի ներածություն, պատմություն, սկզբունքներ	6	4	2
Թեմա 2. Էրգոթերապիայի գնահատման մեթոդները	6	4	2
Թեմա 3. Առօրյա գործունեության (ADL) վերականգնումը	8	4	4
Թեմա 4. Ադապտիվ սարքավորումներ և միջավայրի հարմարեցում	8	4	4
Թեմա 5. Էրգոթերապիան տարբեր հիվանդությունների ժամանակ	8	4	4
Ընդամենը	**36**	**20**	**16**

Դասընթացի թեմաների բովանդակությունը

ԹԵՄԱ 1. Էրգոթերապիայի ներածություն, պատմություն, սկզբունքներ

Էրգոթերապիայի առարկան, պատմությունը և հիմնարար սկզբունքները: Էրգոթերապիայի տեղը ֆիզիկական վերականգնման համակարգում և կապը կինեզիոլոգիայի հետ:

ԹԵՄԱ 2. Էրգոթերապիայի գնահատման մեթոդները

Ֆունկցիոնալ ինքնուրույնության գնահատման գործիքները: Զբաղվածության (occupation) վերլուծություն: Անհատի կարիքների բացահայտումը:

ԹԵՄԱ 3. Առօրյա գործունեության (ADL) վերականգնումը

Առօրյա գործունեության հիմնական և գործիքային տեսակները: Ինքնասպասարկման հմտությունների վերականգնման մեթոդները:

ԹԵՄԱ 4. Ադապտիվ սարքավորումներ և միջավայրի հարմարեցում

Ադապտիվ և օժանդակ սարքավորումների տեսակները: Բնակելի և աշխատանքային միջավայրի հարմարեցման սկզբունքները:

ԹԵՄԱ 5. Էրգոթերապիան տարբեր հիվանդությունների ժամանակ

Էրգոթերապիական միջամտության առանձնահատկությունները նյարդային, հենաշարժողական և տարիքային հիվանդությունների ժամանակ:

Դասընթացի ապահովվածությունը գրականությամբ

1. Willard and Spackman's Occupational Therapy. 13th ed., LWW, 2019.
2. Ердакова Т. и др. — Основы эрготерапии. Москва, 2017.
3. Радомская Р. и др. — Эрготерапия в реабилитации. Санкт-Петербург.
4. Pedretti L. W. — Occupational Therapy: Practice Skills for Physical Dysfunction. Elsevier.

«Ռուս-Հայկական համալսարան» բարձրագույն կրթության միջպետական կրթական կազմակերպություն

Հաստատում եմ՝
ֆիզիկական դաստիարակության և
առողջ ապրելակերպի ամբիոնի վարիչ,
պրոֆեսոր՝ Գրիգորյան Ա.Լ.

«14» հուլիսի 2026 թ., արձանագրություն N 13

Ամբիոն՝ ֆիզիկական դաստիարակության և առողջ ապրելակերպի

Հեղինակ՝ Ա. Ա. Մելքոնյան

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Դասընթաց՝ Ֆիզիկական վերականգնումը երեխաների և դեռահասների հիվանդությունների ժամանակ

Մասնագիտությունը՝101401.00.7 Սպորտ
Կրթական ծրագիր՝ 101401.02.7 Առողջարարական ֆիզիկական կուլտուրա (կինեզիոլոգիա)

Դասընթացի անոտացիան

Դասընթացը ուսումնասիրում է մանկական և դեռահասային տարիքում առավել հաճախ հանդիպող հիվանդությունների ֆիզիկական վերականգնման առանձնահատկությունները:

Ուսումնասիրվում են մանկական օրգանիզմի անատոմոֆիզիոլոգիական առանձնահատկությունները, զարգացման շրջանները, ինչպես նաև նյարդային, հենաշարժողական և գենետիկ հիվանդությունների ֆիզիկական թերապիայի մեթոդները:

Դասընթացի նպատակը և խնդիրները

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել երեխաների և դեռահասների հիվանդությունների ֆիզիկական վերականգնման ծրագրերի կազմման գիտելիքներ և հմտություններ՝ հաշվի առնելով տարիքային առանձնահատկությունները:

Դասընթացի շրջանակներում լուծվում են հետևյալ խնդիրները՝

- ուսումնասիրել մանկական օրգանիզմի զարգացման շրջանները,
- ծանոթանալ նյարդային և հենաշարժողական հիվանդությունների ֆիզիկական վերականգնմանը,
- յուրացնել մանկական տարիքում կիրառվող ֆիզիկական թերապիայի մեթոդները,
- ձևավորել մուլտիդիսցիպլինար թիմում աշխատելու պատկերացում:

Դասընթացի օբյեկտը և առարկան

Դասընթացի օբյեկտը հիվանդություն ունեցող երեխան և դեռահասն է: Առարկան մանկական տարիքի հիվանդությունների ֆիզիկական վերականգնման մեթոդներն են:

Դասընթացի մուտքային պահանջները

Դասընթացի յուրացումը հիմնվում է անատոմիայի, ֆիզիոլոգիայի և ֆիզիկական վերականգնման հիմունքների գիտելիքների վրա:

Դասընթացի յուրացման արդյունքում ձեռք բերվող գիտելիքները և կարողությունները

Դասընթացի յուրացման արդյունքը ապահովում է անհրաժեշտ գիտելիքների, հմտությունների ու կարողությունների համապատասխանությունը ՈԱԾ-ի վերջնարդյունքներին:

Գիտելիքները՝

1. կիմանա մանկական օրգանիզմի անատոմոֆիզիոլոգիական առանձնահատկությունները,
2. կիմանա մանկական տարիքի հիմնական հիվանդությունների բնութագրերը,
3. կիմանա մանկական տարիքում կիրառվող ֆիզիկական թերապիայի մեթոդները,
4. կիմանա մուլտիդիսցիպլինար թիմի դերը վերականգնման գործընթացում:

Հմտությունները՝

գիտելիքի կիրառման հմտությունները՝

1. կկարողանա կազմել տարիքին համապատասխան վերականգնման ծրագիր,
2. կկարողանա կիրառել ֆիզիկական թերապիայի մեթոդներ մանկական տարիքում:

ընդհանրական իմացական հմտությունները՝

1. կկարողանա գնահատել երեխայի շարժողական զարգացումը,
2. կկարողանա ինքնուրույն ուսումնասիրել կլինիկական դեպքերը:

Կարողունակությունը (կոմպետենցիան)՝

ինքնուրույնությունը և պատասխանատվությունը՝

1. կկարողանա ինքնուրույն կայացնել մասնագիտական որոշումներ և գնահատել կիրառված մեթոդների արդյունավետությունը,
2. պատասխանատվությամբ կմոտենա հաճախորդի/բուժառուի հետ աշխատանքին՝ պահպանելով մասնագիտական էթիկայի և անվտանգության սկզբունքները:

Դասավանդման եղանակները և մեթոդները

- դասախոսություն՝ լուսապատկերների (պրեզենտացիաների) ուղեկցությամբ,
- գործնական և սեմինար պարապմունքներ՝ ուսուցման տարբեր միջոցների ու մեթոդների կիրառմամբ,
- ինտերակտիվ քննարկումներ և իրավիճակային (կլինիկական) խնդիրների վերլուծություն,
- ինքնուրույն աշխատանք՝ էսսեների և ռեֆերատների պատրաստմամբ:

Դասընթացի տեղն ուսումնական ծրագրում

Դասընթացը ներառված է «Մասնագիտական դասընթացների կրթաբլոկում»՝ 4 ակադեմիական կրեդիտ (144 կադեմիական ժամ) աշխատատարությամբ, որից 16 ակադեմիական ժամ նախատեսվում է գործնական պարապմունքների համար: Դասընթացը նախատեսվում է ուսումնասիրել 2026-2027 ուսումնական տարվա 1-ին կուրսի 2-րդ կիսամյակում:

Ուսումնական աշխատանքի տեսակները	**Ընդամենը, ակադ. ժամեր**
1. Առարկայի ուսումնասիրման ընդհանուր աշխատատարությունն, այդ թվում՝	**144**
1.1. Լսարանային պարապմունքներ, այդ թվում՝	36
1.1.1. Դասախոսություններ	20
1.1.2. Գործնական պարապմունքներ	16
1.2. Ինքնուրույն աշխատանք, այդ թվում՝	108
1.2.1. Գրավոր ինքնուրույն աշխատանքներ	41
1.2.2. Էսսե և ռեֆերատներ	40
1.2.3. Քննություններին նախապատրաստում	27
Ամփոփիչ ստուգում (քննություն, ստուգարք)	**Քննություն**

Դասընթացի ծավալի բաշխում (ակադեմիական ժամերով) ըստ թեմաների և ուսումնական աշխատանքի տեսակների

Առարկայի բաժինները և թեմաները	**Ընդամենը**	**Դասախոսու-թյուններ**	**Գործնական / սեմինար պարապմունքներ**
1	2=3+4	3	4
Թեմա 1. Ներածություն, առարկան և խնդիրները	4	2	2
Թեմա 2. Մանկական օրգանիզմի զարգացման շրջանները	4	2	2
Թեմա 3. Նորածինների ռեֆլեքսները, նյարդահոգեկան և շարժողական զարգացումը	4	2	2
Թեմա 4. ԿՆՀ պերինատալ ախտահարումներ, մանկական ուղեղային կաթված	8	4	4
Թեմա 5. Հենաշարժողական համակարգի հիվանդություններ, բնածին հոդախախտ	6	4	2
Թեմա 6. Գենետիկ հիվանդություններ, աուտիզմ	4	2	2

Թեմա 7. Ֆիզիկական թերապիայի մեթոդները, մուլտիդիսցիպլինար թիմ	6	4	2
Ընդամենը	**36**	**20**	**16**

Դասընթացի թեմաների բովանդակությունը

ԹԵՄԱ 1. Ներածություն, առարկան և խնդիրները

Ընդհանուր հասկացություն մանկական հիվանդությունների և դրանց ֆիզիկական վերականգնման մասին: Դասընթացի առարկան, խնդիրները և ճյուղերը:

ԹԵՄԱ 2. Մանկական օրգանիզմի զարգացման շրջանները

Մանկական օրգանիզմի անատոմոֆիզիոլոգիական առանձնահատկությունները, էտապային զարգացումը:

ԹԵՄԱ 3. Նորածինների ռեֆլեքսները, նյարդահոգեկան և շարժողական զարգացումը

Ընդհանուր հասկացություն նորածինների ոչ պայմանական ռեֆլեքսների մասին: Նյարդահոգեկան և շարժողական ֆունկցիաների զարգացումը:

ԹԵՄԱ 4. ԿՆՀ պերինատալ ախտահարումներ, մանկական ուղեղային կաթված

Պերինատալ էնցեֆալոպաթիա, հիդրոցեֆալիա: Մանկական ուղեղային կաթվածի ժամանակ ֆիզիկական թերապիայի նպատակները, խնդիրները և մեթոդիկաները:

ԹԵՄԱ 5. Հենաշարժողական համակարգի հիվանդություններ, բնածին հոդախախտ

Հենաշարժողական համակարգի հիվանդությունների ժամանակ վարժությունների համալիրների կիրառումը: Կոնք-ազդրային հոդի բնածին հոդախախտի ֆիզիկական վերականգնումը:

ԹԵՄԱ 6. Գենետիկ հիվանդություններ, աուտիզմ

Ընդհանուր հասկացություն գենետիկ հիվանդությունների և դրանց ֆիզիկական վերականգնման մասին: Աուտիզմի սպեկտրի խանգարումների առանձնահատկությունները:

ԹԵՄԱ 7. Ֆիզիկական թերապիայի մեթոդները, մուլտիդիսցիպլինար թիմ


Մանկական տարիքում կիրառվող ֆիզիկական թերապիայի մեթոդները: Մուլտիդիսցիպլինար թիմի դերը երեխաների և դեռահասների վերականգնման գործընթացում:

Դասընթացի ապահովվածությունը գրականությամբ

1. Բժշկական ռեաբիլիտոլոգիայի հիմունքները: Ուսումնական ձեռնարկ / Ա. Գ. Իսախանյան. Երևան, ԵՊԲՀ, 2015.
2. Епифанов В. А. — Лечебная физическая культура. Москва, ГЭОТАР-Медиа, 2006.
3. Бадалян Л. О. — Детская неврология. Москва, МЕДпресс-информ, 2016.
4. Tecklin J. S. — Pediatric Physical Therapy. 5th ed., LWW, 2015.

«Ռուս-Հայկական համալսարան» բարձրագույն կրթության միջպետական կրթական կազմակերպություն

Հաստատում եմ՝
ֆիզիկական դաստիարակության և
առողջ ապրելակերպի ամբիոնի վարիչ,
պրոֆեսոր՝ Գրիգորյան Ա.Լ.



«14» հուլիսի 2026 թ., արձանագրություն N 13

Ամբիոն՝ ֆիզիկական դաստիարակության և առողջ ապրելակերպի

Հեղինակ՝ Բ. Խ. Մնացականյան

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Դասընթաց՝ Հանրային առողջության կառավարում

Մասնագիտությունը՝101401.00.7 Սպորտ
Կրթական ծրագիր՝ 101401.02.7 Առողջարարական ֆիզիկական կուլտուրա (կինեզիոլոգիա)

Դասընթացի անոտացիա

«Հանրային առողջության կառավարում» դասընթացը նախատեսված է մագիստրատուրայի ուսանողների համար և նպատակ ունի ձևավորել հանրային առողջության պահպանման և կառավարման համակարգի վերաբերյալ խորացված գիտելիքներ, ռազմավարական մտածողություն և կառավարչական կարողություններ: Դասընթացում ուսումնասիրվում են առողջապահական համակարգերի կազմակերպման և կառավարման սկզբունքները, բնակչության առողջության գնահատման և մոնիթորինգի մեթոդները, հիվանդությունների կանխարգելման ռազմավարությունները, առողջ ապրելակերպի խթանման ծրագրերը, առողջապահական քաղաքականության մշակման հիմունքները, ինչպես նաև առողջարարական ֆիզիկական կուլտուրայի և կինեզիոլոգիայի դերը հանրային առողջության պահպանման գործում:

Դասընթացի նպատակը

Ձևավորել մագիստրանտների տեսական գիտելիքները, վերլուծական մտածողությունը և գործնական կարողությունները հանրային առողջության կառավարման, առողջապահական ծրագրերի պլանավորման, կազմակերպման, գնահատման և արդյունավետ իրականացման ոլորտում՝ հիմնվելով ժամանակակից գիտական մոտեցումների և ապացուցողական բժշկության սկզբունքների վրա:

Դասընթացի խնդիրները

- ուսումնասիրել հանրային առողջության տեսական և մեթոդաբանական հիմունքները,
- ներկայացնել առողջապահական համակարգերի կազմակերպման և կառավարման ժամանակակից մոդելները,
- ուսումնասիրել բնակչության առողջության գնահատման և համաճարակաբանական վերլուծության մեթոդները,
- ձևավորել հանրային առողջության ծրագրերի նախագծման և կառավարման հմտություններ,
- ներկայացնել հիվանդությունների կանխարգելման և առողջության խթանման ժամանակակից ռազմավարությունները,
- ուսումնասիրել առողջապահական քաղաքականության և առողջության տնտեսագիտության հիմնական սկզբունքները,
- զարգացնել ռազմավարական կառավարման և առաջնորդության կարողությունները,

- ձևավորել առողջապահական ոլորտում գիտահետազոտական և ապացուցողական գործունեության կարողություններ:

Դասընթացի օբյեկտը և առարկան

Օբյեկտը՝ բնակչության առողջության պահպանման և բարելավման գործընթացը:

Առարկան՝ հանրային առողջության կառավարման, առողջապահական քաղաքականության, առողջության խթանման և կանխարգելիչ ծրագրերի կազմակերպման և գնահատման ժամանակակից մեթոդներն ու տեխնոլոգիաները:

Դասընթացի մուտքային պահանջները

Դասընթացի յուրացման համար անհրաժեշտ են մարդու անատոմիայի, ֆիզիոլոգիայի, առողջ ապրելակերպի, կինեզիոլոգիայի, վերականգնողական բժշկության, համաճարակաբանության, կենսավիճակագրության և առողջապահության կազմակերպման վերաբերյալ հիմնարար գիտելիքներ:

Դասընթացի յուրացման արդյունքում ձեռք բերվող գիտելիքները և կարողությունները

Դասընթացի յուրացման արդյունքում մագիստրանտը ձեռք է բերում գիտելիքներ, հմտություններ և կարողունակություններ, որոնք համապատասխանում են Հայաստանի ազգային որակավորումների շրջանակի (ՈՒՇ) մագիստրոսի կրթական մակարդակի վերջնարդյունքներին:

Գիտելիքները

- հանրային առողջության տեսական և մեթոդաբանական հիմունքները,
- առողջապահական համակարգերի կառավարման ժամանակակից մոդելները,
- առողջության ցուցանիշների գնահատման մեթոդները,
- առողջապահական քաղաքականության և ռազմավարական պլանավորման սկզբունքները,
- հիվանդությունների կանխարգելման և առողջության խթանման ծրագրերի մշակման մեթոդները,
- առողջապահության տնտեսագիտության և ֆինանսավորման հիմունքները,

- առողջապահական ծառայությունների որակի կառավարման համակարգերը:

Հմտությունները

Գիտելիքի կիրառման հմտությունները

- գնահատել բնակչության առողջական վիճակը,
- նախագծել և իրականացնել հանրային առողջության ծրագրեր,
- վերլուծել առողջապահական ցուցանիշները և վիճակագրական տվյալները,
- մշակել կանխարգելիչ միջոցառումների ծրագրեր,
- գնահատել առողջապահական ծրագրերի արդյունավետությունը,
- կիրառել ապացուցողական մոտեցումներ կառավարման որոշումների ընդունման գործընթացում:

Ընդհանրական իմացական հմտությունները

- ռազմավարական և համակարգային մտածողություն,
- գիտական տվյալների քննադատական վերլուծություն,
- բազմամասնագիտական թիմերի արդյունավետ ղեկավարում,
- ապացուցողական որոշումների կայացում,
- գիտահետազոտական նախագծերի մշակում,
- մասնագիտական հաղորդակցման և առաջնորդության հմտություններ:

Կարողունակությունները (կոմպետենցիաները)

Ինքնուրույնություն և պատասխանատվություն

- ինքնուրույն մշակել և ղեկավարել հանրային առողջության ծրագրեր,
- պատասխանատվություն կրել ռազմավարական որոշումների և առողջապահական ծրագրերի իրականացման արդյունքների համար,
- ապահովել առողջապահական ծառայությունների որակի շարունակական բարելավումը,
- պահպանել մասնագիտական էթիկայի և հանրային առողջության սկզբունքները,
- ղեկավարել բազմամասնագիտական մասնագիտական թիմեր,
- իրականացնել շարունակական մասնագիտական և գիտական զարգացում:

Դասավանդման եղանակները և մեթոդները

- դասախոսություններ,
- սեմինարներ,
- գործնական պարապմունքներ,
- դեպքերի վերլուծություն
- նախագծային աշխատանքներ,
- գիտական հոդվածների քննարկումներ,
- խմբային քննարկումներ,
- ներկայացումներ,
- ինքնուրույն հետազոտական աշխատանք:

Դասընթացի տեղն ուսումնական ծրագրում

Դասընթացը ներառված է «Մասնագիտական դասընթացների կրթաբլոկում»՝ 2 ակադեմիական կրեդիտ (72 ակադեմիական ժամ) աշխատատարությամբ, որից 10 ակադեմիական ժամ նախատեսվում է գործնական պարապմունքների համար: Դասընթացը նախատեսվում է ուսումնասիրել 2026-2027 ուսումնական տարվա 1-ին կուրսի 2-րդ կիսամյակում:

Ուսումնական աշխատանքի տեսակները	**Ընդամենը, ակադ. ժամեր**
1. Առարկայի ուսումնասիրման ընդհանուր աշխատատարությունն, այդ թվում՝	**72**
1.1. Լսարանային պարապմունքներ, այդ թվում՝	**20**
1.1.1. Դասախոսություններ	**10**
1.1.2. Գործնական պարապմունքներ, այդ թվում՝	**10**
1.1.2.1. Ստուգողական աշխատանքներ	**10**
1.2. Ինքնուրույն աշխատանք, այդ թվում՝	**52**
1.2.1. Քննություններին նախապատրաստում	**30**
1.2.2. Ինքնուրույն աշխատանքի այլ տեսակներ, այդ թվում՝	**22**
1.2.2.1. Գրավոր ինքնուրույն աշխատանքներ	**12**

1.2.2.2.Էսսե և ռեֆերատներ	**10**
Ամփոփիչ ստուգում (քննություն, ստուգարք)	**ստուգարք**

Դասընթացի ծավալի բաշխում (ակադեմիական ժամերով) ըստ թեմաների և ուսումնական աշխատանքի տեսակների

Առարկայի բաժինները և թեմաները	**Ընդամենը**	**Դասախոսու-թյուններ**	**Գործնական / սեմինար պարապմունքներ**
1	**2=3+4**	**3**	**4**
Թեմա 1. Հանրային առողջության տեսական և մեթոդաբանական հիմունքները	**2**	**2**	**0**
Թեմա 2. Առողջության ցուցանիշներ և բնակչության առողջության գնահատում	**2**	**0**	**2**
Թեմա 3. Հանրային առողջության կառավարման համակարգերը և առողջապահական քաղաքականությունը	**2**	**2**	**0**
Թեմա 4. Առողջության խթանում և հիվանդությունների կանխարգելում	**2**	**0**	**2**
Թեմա 5. Առողջապահական ծրագրերի պլանավորում, կառավարում և գնահատում	**2**	**2**	**0**
Թեմա 6. Առողջության տնտեսագիտություն և առողջապահության ֆինանսավորում	**2**	**0**	**2**
Թեմա 7. Հանրային առողջության ոլորտում գիտահետազոտական գործունեություն և ապացուցողական մոտեցումներ	**4**	**2**	**2**
Թեմա 8. Առողջարարական ֆիզիկական կուլտուրան և կինեզիոլոգիան հանրային առողջության համակարգում	**4**	**2**	**2**
Ընդամենը	**20**	**10**	**10**

Դասընթացի թեմաների բովանդակությունը

Թեմա 1. Հանրային առողջության տեսական և մեթոդաբանական հիմունքները

Հանրային առողջության հասկացությունը և հիմնական գործառույթները: Հանրային առողջության պատմական զարգացումը: Առողջության սոցիալական որոշիչները: Հանրային

առողջության ժամանակակից հիմնախնդիրները: Հանրային առողջության պահպանման սկզբունքները: Առողջապահական համակարգերի հիմնական մոդելները: Հանրային առողջության ոլորտում միջազգային կազմակերպությունների գործունեությունը:

Թեմա 2. Առողջության ցուցանիշներ և բնակչության առողջության գնահատում

Բնակչության առողջության հիմնական ցուցանիշները: Ժողովրդագրական գործընթացների գնահատումը: Հիվանդացության և մահացության ցուցանիշները: Համաճարակաբանական հետազոտությունների հիմունքները: Առողջության ռիսկի գործոնների գնահատումը: Հանրային առողջության մոնիթորինգի համակարգերը: Վիճակագրական տվյալների վերլուծության և մեկնաբանման սկզբունքները:

Թեմա 3. Հանրային առողջության կառավարման համակարգերը և առողջապահական քաղաքականությունը

Առողջապահության կառավարման սկզբունքները: Հանրային առողջության ռազմավարական կառավարումը: Առողջապահական քաղաքականության մշակման գործընթացը: Առողջապահական բարեփոխումների հիմնական ուղղությունները: Առողջապահության ոլորտի օրենսդրական կարգավորումները: Առողջապահական ծառայությունների որակի կառավարումը: Առողջապահության ոլորտում միջազգային համագործակցությունը:

Թեմա 4. Առողջության խթանում և հիվանդությունների կանխարգելում

Առողջ ապրելակերպի ձևավորման սկզբունքները: Առաջնային, երկրորդային և երրորդային կանխարգելում: Առողջության խթանման ազգային և միջազգային ծրագրերը: Ֆիզիկական ակտիվության նշանակությունը հանրային առողջության պահպանման գործում: Առողջ սնուցման և վարքագծային ռիսկերի կառավարումը: Առողջապահական կրթության կազմակերպումը: Հանրային իրազեկման ծրագրերի իրականացումը:

Թեմա 5. Առողջապահական ծրագրերի պլանավորում, կառավարում և գնահատում

Առողջապահական ծրագրերի նախագծման փուլերը: Ծրագրերի ռազմավարական պլանավորումը: Ծրագրերի իրականացման կազմակերպումը: Ծրագրերի ֆինանսական և մարդկային ռեսուրսների կառավարումը: Արդյունավետության գնահատման մեթոդները:

Ռիսկերի կառավարումը ծրագրերի իրականացման ընթացքում: Ծրագրերի մշտադիտարկում և հաշվետվողականություն:

Թեմա 6. Առողջության տնտեսագիտություն և առողջապահության ֆինանսավորում

Առողջության տնտեսագիտության հիմնական հասկացությունները: Առողջապահության ֆինանսավորման մոդելները: Ծախսերի և արդյունավետության գնահատումը: Առողջապահական ծառայությունների տնտեսական վերլուծությունը: Առողջապահական ապահովագրության համակարգերը: Առողջապահական ռեսուրսների արդյունավետ կառավարումը: Տնտեսագիտական գնահատման կիրառումը առողջապահական որոշումների ընդունման գործընթացում:

Թեմա 7. Հանրային առողջության ոլորտում գիտահետազոտական գործունեություն և ապացուցողական մոտեցումներ

Գիտահետազոտական մեթոդաբանության հիմունքները: Հանրային առողջության հետազոտությունների նախագծումը: Ապացուցողական առողջապահության սկզբունքները: Գիտական տվյալների հավաքագրումը և վերլուծությունը: Գիտական հրապարակումների քննադատական գնահատումը: Հետազոտությունների էթիկական սկզբունքները: Հետազոտության արդյունքների կիրառումը հանրային առողջության կառավարման գործընթացում:

Թեմա 8. Առողջարարական ֆիզիկական կուլտուրան և կինեզիոլոգիան հանրային առողջության համակարգում

Ֆիզիկական ակտիվության դերը հանրային առողջության պահպանման գործում: Առողջարարական ֆիզիկական կուլտուրայի ծրագրերի մշակումը: Կինեզիոլոգիական մոտեցումների կիրառումը առողջության պահպանման գործում: Տարբեր տարիքային խմբերի առողջարար ծրագրերի առանձնահատկությունները: Ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելումը ֆիզիկական ակտիվության միջոցով: Համայնքային առողջապահական ծրագրերում կինեզիոլոգի մասնակցությունը: Միջգերատեսչական համագործակցությունը հանրային առողջության ոլորտում:

Դասընթացի ապահովվածությունը գրականությամբ

1. Schneider M. J. *Introduction to Public Health*. 7th ed. Jones & Bartlett Learning, 2024.
2. Turnock B. J. *Public Health: What It Is and How It Works*. 7th ed. Jones & Bartlett Learning, 2022.
3. Detels R., Gulliford M., Karim Q. A., Tan C. C. *Oxford Textbook of Global Public Health*. 7th ed. Oxford University Press, 2021.
4. World Health Organization (WHO). *World Health Statistics 2024*. Geneva: WHO, 2024.
5. World Health Organization (WHO). *Global Action Plan on Physical Activity 2018–2030*. Geneva: WHO.
6. Gordis L. *Epidemiology*. 6th ed. Elsevier, 2019.
7. Лисицын Ю. П. *Общественное здоровье и здравоохранение*. Москва: ГЭОТАР-Медиа, 2022.
8. Решетников А. В. *Экономика здравоохранения*. Москва: ГЭОТАР-Медиа, 2021.
9. Ավետիսյան Ս. Ա. **Հանրային առողջություն**: Երևան: ԵՊԲՀ հրատարակչություն, 2020:
10. Հայաստանի Հանրապետության «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենք, Հայաստանի Հանրապետության Առողջապահության նախարարության հանրային առողջության ռազմավարական փաստաթղթեր:

«Ռուս-Հայկական համալսարան» բարձրագույն կրթության միջպետական կրթական կազմակերպություն

Հաստատում եմ՝
ֆիզիկական դաստիարակության և
առողջ ապրելակերպի ամբիոնի վարիչ,
պրոֆեսոր՝ Գրիգորյան Ա.Լ.

«14» հուլիսի 2026 թ., արձանագրություն N 13

Ամբիոն՝ ֆիզիկական դաստիարակության և առողջ ապրելակերպի

Հեղինակ՝ Լ. Ս. Ստեփանյան

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Դասընթաց՝ Սթրեսի կառավարման և ինքնակարգավորման հմտություններ

Մասնագիտությունը՝101401.00.7 Սպորտ
Կրթական ծրագիր՝ 101401.02.7 Առողջարարական ֆիզիկական կուլտուրա (կինեզիոլոգիա)

Դասընթացի անոտացիան

«Սթրեսի կառավարման և ինքնակարգավորման հմտություններ» ընտրովի դասընթացը ուսումնասիրում է սթրեսի բնույթը, տեսակները և կառավարման ժամանակակից մոտեցումները:

Ուսումնասիրվում են սթրեսի հոգեբանական և կենսաբանական մեխանիզմները, մասնագիտական սթրեսի առանձնահատկությունները, կոպինգ ռազմավարությունները և ինքնակարգավորման տեխնիկաները:

Դասընթացի նպատակը և խնդիրները

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել սթրեսի կառավարման և ինքնակարգավորման գիտելիքներ ու գործնական հմտություններ:

Դասընթացի շրջանակներում լուծվում են հետևյալ խնդիրները՝

- ուսումնասիրել սթրեսը որպես հոգեբանական և կենսաբանական կատեգորիա,
- ծանոթանալ սթրեսի տեսակներին և մասնագիտական սթրեսի առանձնահատկություններին,
- յուրացնել սթրեսի կառավարման մոդելները և կոպինգ ռազմավարությունները,
- ձևավորել ինքնակարգավորման գործնական հմտություններ:

Դասընթացի օբյեկտը և առարկան

Դասընթացի օբյեկտը սթրեսային վիճակն է: Առարկան սթրեսի կառավարման և ինքնակարգավորման մեթոդներն են:

Դասընթացի մուտքային պահանջները

Դասընթացի յուրացումը հիմնվում է հոգեբանության և հոգեֆիզիոլոգիայի բազային գիտելիքների վրա:

Դասընթացի յուրացման արդյունքում ձեռք բերվող գիտելիքները և կարողությունները

Դասընթացի յուրացման արդյունքը ապահովում է անհրաժեշտ գիտելիքների, հմտությունների ու կարողությունների համապատասխանությունը ՈՒՇ-ի վերջնարդյունքներին:

Գիտելիքները՝

1. կիմանա սթրեսի հոգեբանական և կենսաբանական մեխանիզմները,
2. կիմանա սթրեսի տեսակները և մասնագիտական սթրեսի առանձնահատկությունները,
3. կիմանա սթրեսի կառավարման մոդելները,
4. կիմանա ինքնակարգավորման տեխնիկաները:

Հմտությունները՝

գիտելիքի կիրառման հմտությունները՝

1. կկարողանա կիրառել սթրեսի կառավարման տեխնիկաներ,
2. կկարողանա կիրառել ինքնակարգավորման մեթոդներ:

ընդհանրական իմացական հմտությունները՝

1. կկարողանա գնահատել սթրեսի մակարդակը և պատճառները,
2. կկարողանա ինքնուրույն ընտրել կոպինգ ռազմավարություն:

Կարողունակությունը (կոմպետենցիան)՝

ինքնուրույնությունը և պատասխանատվությունը՝

1. կկարողանա ինքնուրույն կայացնել մասնագիտական որոշումներ և գնահատել կիրառված մեթոդների արդյունավետությունը,
2. պատասխանատվությամբ կմոտենա հաճախորդի/բուժառուի հետ աշխատանքին՝ պահպանելով մասնագիտական էթիկայի և անվտանգության սկզբունքները:

Դասավանդման եղանակները և մեթոդները

- դասախոսություն՝ լուսապատկերների (պրեզենտացիաների) ուղեկցությամբ,
- գործնական և սեմինար պարապմունքներ՝ ուսուցման տարբեր միջոցների ու մեթոդների կիրառմամբ,
- ինտերակտիվ քննարկումներ և իրավիճակային (կլինիկական) խնդիրների վերլուծություն,
- ինքնուրույն աշխատանք՝ էսսեների և ռեֆերատների պատրաստմամբ:

Դասընթացի տեղն ուսումնական ծրագրում

Դասընթացը ներառված է «Մասնագիտական դասընթացների կրթաբլոկում»՝ 2 ակադեմիական կրեդիտ (72 ակադեմիական ժամ) աշխատատարությամբ, որից 10 ակադեմիական ժամ նախատեսվում է գործնական պարապմունքների համար: Դասընթացը նախատեսվում է ուսումնասիրել 2026-2027 ուսումնական տարվա 1-ին կուրսի 2-րդ կիսամյակում:

Ուսումնական աշխատանքի տեսակները	**Ընդամենը, ակադ. ժամեր**
1. Առարկայի ուսումնասիրման ընդհանուր աշխատատարությունն, այդ թվում՝	**72**
1.1. Լսարանային պարապմունքներ, այդ թվում՝	20
1.1.1. Դասախոսություններ	10
1.1.2. Գործնական պարապմունքներ	10
1.2. Ինքնուրույն աշխատանք, այդ թվում՝	52
1.2.1. Գրավոր ինքնուրույն աշխատանքներ	11
1.2.2. Էսսե և ռեֆերատներ	11
1.2.3. Քննություններին նախապատրաստում	30
Ամփոփիչ ստուգում (քննություն, ստուգարք)	**Ստուգարք**

Դասընթացի ծավալի բաշխում (ակադեմիական ժամերով) ըստ թեմաների և ուսումնական աշխատանքի տեսակների

Առարկայի բաժինները և թեմաները	**Ընդամենը**	**Դասախոսու-թյուններ**	**Գործնական / սեմինար պարապմունքներ**
1	2=3+4	3	4
Թեմա 1. Սթրեսը որպես հոգեբանական և կենսաբանական կատեգորիա	6	4	2
Թեմա 2. Սթրեսի տեսակները, մասնագիտական սթրեսի առանձնահատկությունները	6	2	4
Թեմա 3. Սթրեսի կառավարման մոդելները և կոպինգ ռազմավարությունները	4	2	2
Թեմա 4. Ինքնակարգավորման տեխնիկաներ	4	2	2
Ընդամենը	**20**	**10**	**10**

Դասընթացի թեմաների բովանդակությունը

ԹԵՄԱ 1. Սթրեսը որպես հոգեբանական և կենսաբանական կատեգորիա

Սթրեսի հասկացությունը, ընդհանուր ադապտացիոն համախտանիշը: Սթրեսի ֆիզիոլոգիական և հոգեբանական մեխանիզմները:

ԹԵՄԱ 2. Սթրեսի տեսակները, մասնագիտական սթրեսի առանձնահատկությունները

Էուստրես և դիստրես: Սուր և քրոնիկ սթրես: Մասնագիտական սթրեսի և հուզական այրման առանձնահատկությունները:

ԹԵՄԱ 3. Սթրեսի կառավարման մոդելները և կոպինգ ռազմավարությունները

Սթրեսի կառավարման հիմնական մոդելները և մոտեցումները: Կոպինգ ռազմավարությունների դասակարգումը և ընտրությունը:

ԹԵՄԱ 4. Ինքնակարգավորման տեխնիկաներ

Շնչառական, մկանային ռելաքսացիայի և մեդիտատիվ տեխնիկաներ: Ինքնակարգավորման հմտությունների զարգացումը:

Դասընթացի ապահովվածությունը գրականությամբ

1. Գրիգորյան Վ. — Հոգեֆիզիոլոգիա. Երևան, ԵՊՀ հրատ., 2014.
2. Бодров В. А. — Психологический стресс. Москва, 1995.
3. Каменюкин А. Г., Ковпак Д. В. — Стресс-менеджмент. Санкт-Петербург, Питер, 2012.
4. Barlow D. H. — Principles and Practice of Stress Management. Guilford Press, 2007.

«Ռուս-Հայկական համալսարան» բարձրագույն կրթության

միջպետական կրթական կազմակերպություն

Հաստատում եմ՝
ֆիզիկական դաստիարակության և
առողջ ապրելակերպի ամբիոնի վարիչ,
պրոֆեսոր ՝ Գրիգորյան Ա.Լ.

«14» հուլիսի 2026 թ. արձանագրություն N 13

Ամբիոն՝ Ֆիզիկական դաստիարակության և առողջ ապրելակերպի

Հեղինակ՝ Լ. Ս. Ստեփանյան

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Դասընթաց՝ Ֆունկցիոնալ անատոմիա և շարժումների նեյրոֆիզիոլոգիա

Մասնագիտությունը՝101401.00.7 Սպորտ
Կրթական ծրագիր՝ 101401.02.7 Առողջարարական ֆիզիկական կուլտուրա (կինեզիոլոգիա)

Դասընթացի անոտացիան

«Ֆունկցիոնալ անատոմիա և շարժումների նեյրոֆիզիոլոգիա» դասընթացը հանդիսանում է կինեզիոլոգիայի հիմնարար բնագիտական հենքը, որում ինտեգրված ձևով ուսումնասիրվում են հենաշարժողական համակարգի ֆունկցիոնալ անատոմիան, կենսամեխանիկան և շարժման նյարդային կարգավորման մեխանիզմները:

Դասընթացի ընթացքում ուսանողները խորությամբ ուսումնասիրում են ոսկրերի, հոդերի և մկանների ֆունկցիոնալ առանձնահատկությունները, շարժման կենսամեխանիկական օրինաչափությունները, ինչպես նաև կենտրոնական և ծայրամասային նյարդային համակարգի դերը շարժողական գործառույթների ապահովման և շարժողական հմտությունների ձևավորման գործում:

Դասընթացի նպատակը և խնդիրները

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել համակարգված գիտելիքներ հենաշարժողական համակարգի ֆունկցիոնալ անատոմիայի, կենսամեխանիկայի և շարժման նյարդային կարգավորման վերաբերյալ՝ որպես կինեզիոլոգիական վերլուծության և միջամտության հիմք:

Դասընթացի շրջանակներում լուծվում են հետևյալ խնդիրները՝

- ուսումնասիրել հենաշարժողական համակարգի ֆունկցիոնալ-անատոմիական կառուցվածքը,
- յուրացնել շարժման կենսամեխանիկական վերլուծության սկզբունքները,
- ուսումնասիրել շարժման կենտրոնական և ծայրամասային նյարդային կարգավորման մեխանիզմները,
- ձևավորել շարժողական հմտությունների ձևավորման նեյրոֆիզիոլոգիական հիմքերի ըմբռնում:

Դասընթացի օբյեկտը և առարկան

Դասընթացի օբյեկտը մարդու հենաշարժողական և նյարդամկանային համակարգերն են: Առարկան այդ համակարգերի ֆունկցիոնալ-անատոմիական կառուցվածքը, կենսամեխանիկական օրինաչափությունները և շարժման նյարդային կարգավորման մեխանիզմներն են:

Դասընթացի մուտքային պահանջները

Դասընթացի յուրացումը հիմնվում է անատոմիայի, ֆիզիոլոգիայի և ֆիզիկայի բազային գիտելիքների վրա:

Դասընթացի յուրացման արդյունքում ձեռք բերվող գիտելիքները և կարողությունները

Դասընթացի յուրացման արդյունքը ապահովում է անհրաժեշտ գիտելիքների, հմտությունների ու կարողությունների համապատասխանությունը ՈԱԾ-ի վերջնարդյունքներին:

Գիտելիքները՝

1. կիմանա հենաշարժողական համակարգի ֆունկցիոնալ անատոմիան,
2. կիմանա շարժման կենսամեխանիկայի հիմնական օրինաչափությունները,
3. կիմանա շարժման նյարդային կարգավորման կենտրոնական և ծայրամասային մեխանիզմները,
4. կիմանա շարժողական հմտությունների ձևավորման նեյրոֆիզիոլոգիական հիմքերը:

Հմտությունները՝

գիտելիքի կիրառման հմտությունները՝

1. կկարողանա կատարել շարժման կենսամեխանիկական վերլուծություն,
2. կկարողանա բացահայտել հենաշարժողական համակարգի ֆունկցիոնալ խանգարումները:

ընդհանրական իմացական հմտությունները՝

1. կկարողանա համադրել անատոմիական, կենսամեխանիկական և նեյրոֆիզիոլոգիական տվյալները,
2. կկարողանա ինքնուրույն վերլուծել շարժողական գործողությունների կառուցվածքը:

Կարողունակությունը (կոմպետենցիան)՝

ինքնուրույնությունը և պատասխանատվությունը՝

1. կկարողանա ինքնուրույն կայացնել մասնագիտական որոշումներ և գնահատել կիրառված մեթոդների արդյունավետությունը,
2. պատասխանատվությամբ կմոտենա հաճախորդի/բուժառուի հետ աշխատանքին՝ պահպանելով մասնագիտական էթիկայի և անվտանգության սկզբունքները:

Դասավանդման եղանակները և մեթոդները

- դասախոսություն՝ լուսապատկերների (պրեզենտացիաների) ուղեկցությամբ,
- գործնական և սեմինար պարապմունքներ՝ ուսուցման տարբեր միջոցների ու մեթոդների կիրառմամբ,
- ինտերակտիվ քննարկումներ և իրավիճակային (կլինիկական) խնդիրների վերլուծություն,
- ինքնուրույն աշխատանք՝ էսսեների և ռեֆերատների պատրաստմամբ:

Դասընթացի տեղն ուսումնական ծրագրում

Դասընթացը ներառված է «Մասնագիտական դասընթացների կրթաբլոկում»՝ 4 ակադեմիական կրեդիտ (144 ակադեմիական ժամ) աշխատատարությամբ, որից 32 ակադեմիական ժամ նախատեսվում է գործնական պարապմունքների համար: Դասընթացը նախատեսվում է ուսումնասիրել 2026-2027 ուսումնական տարվա 1-ին կուրսի 1-ին կիսամյակում:

Ուսումնական աշխատանքի տեսակները	**Ընդամենը, ակադ. ժամեր**
1. Առարկայի ուսումնասիրման ընդհանուր աշխատատարությունն, այդ թվում՝	**144**
1.1. Լսարանային պարապմունքներ, այդ թվում՝	64
1.1.1. Դասախոսություններ	32
1.1.2. Գործնական պարապմունքներ	32
1.2. Ինքնուրույն աշխատանք, այդ թվում՝	80
1.2.1. Գրավոր ինքնուրույն աշխատանքներ	12
1.2.2. Էսսե և ռեֆերատներ	11
1.2.3. Քննություններին նախապատրաստում	57
Ամփոփիչ ստուգում (քննություն, ստուգարք)	**Քննություն**

Դասընթացի ծավալի բաշխում (ակադեմիական ժամերով) ըստ թեմաների և ուսումնական աշխատանքի տեսակների

Առարկայի բաժինները և թեմաները	**Ընդամենը**	**Դասախոսու-թյուններ**	**Գործնական / սեմինար պարապմունքներ**
1	2=3+4	3	4
Թեմա 1. Հենաշարժողական համակարգի ֆունկցիոնալ անատոմիա	12	6	6
Թեմա 2. Կենսամեխանիկայի հիմնական օրինաչափությունները	14	6	8
Թեմա 3. Հոդերը որպես մեխանիկական լծակներ, կենսամեխանիկական շղթաներ	10	6	4
Թեմա 4. Շարժման նյարդային կարգավորումը. կենտրոնական և ծայրամասային մեխանիզմներ	12	6	6

Թեմա 5. Շարժողական հմտությունների ձևավորման նեյրոֆիզիոլոգիան	8	4	4
Թեմա 6. Շարժողական գործառույթների լոկալիզացիան և նյարդային պլաստիկությունը	8	4	4
Ընդամենը	**64**	**32**	**32**

Դասընթացի թեմաների բովանդակությունը

ԹԵՄԱ 1. Հենաշարժողական համակարգի ֆունկցիոնալ անատոմիա

Մարդու կմախքի կառուցվածքային և ֆունկցիոնալ առանձնահատկությունները: Ոսկրերի միացումները, հոդերում ազատության աստիճանները: Մկանների կառուցվածքը և գործառույթները:

ԹԵՄԱ 2. Կենսամեխանիկայի հիմնական օրինաչափությունները

Շարժման վերլուծություն, կինետիկական և կինեմատիկական պարամետրեր: Շարժողական ապարատի կենսամեխանիկական կառուցվածքը և ֆունկցիաները: Շարժողական գործողությունների կենսամեխանիկան:

ԹԵՄԱ 3. Հոդերը որպես մեխանիկական լծակներ, կենսամեխանիկական շղթաներ

Լծակների աշխատանքի ֆիզիկան, հոդերը որպես լծակներ: Հոդային և մկանային ցավերի մեխանիզմները: Բաց և փակ կենսամեխանիկական շղթաներ, լոկոմոտոր շարժումներ:

ԹԵՄԱ 4. Շարժման նյարդային կարգավորումը. կենտրոնական և ծայրամասային մեխանիզմներ

Շարժման կարգավորման մակարդակները: Ողնուղեղային ռեֆլեքսներ, պրոպրիոռեցեպցիա: Ուղեղիկի և բազալ հանգույցների դերը շարժման համակարգման մեջ:

ԹԵՄԱ 5. Շարժողական հմտությունների ձևավորման նեյրոֆիզիոլոգիան

Շարժողական հմտությունների և դրանց մտապատկերների ձևավորման մեխանիզմները: Շարժողական ուսուցման փուլերը: Հետադարձ կապի դերը շարժման կատարելագործման մեջ:

ԹԵՄԱ 6. Շարժողական գործառույթների լոկալիզացիան և նյարդային պլաստիկությունը

Շարժողական գործառույթների կեղևային լոկալիզացիան: Նյարդային պլաստիկությունը որպես վերականգնման հիմք: Հոգեֆիզիոլոգիական մեթոդների կիրառումը ռեաբիլիտացիայում:

Դասընթացի ապահովվածությունը գրականությամբ

1. Кичайкина Н. Б., Козлов И. М. — Биомеханика. Санкт-Петербург, 2008.
2. Донской Д. Д., Зациорский В. М. — Биомеханика. Москва, Физкультура и спорт, 1979.
3. Գրիգորյան Վ. — Հոգեֆիզիոլոգիա. Երևան, ԵՊՀ հրատ., 2014.
4. Human Physiology. Wikibooks.org, 2013.
5. Neumann D. A. — Kinesiology of the Musculoskeletal System. 3rd ed., Elsevier, 2017.